ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԻ ԵՎ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր

Արևելքի ճնշված ժողովուրդների ճակատագիրը գրավել է բազմաթիվ մտածողների և քաղաքական գործիչների ուշադրությունը։ Նրանցից ոմանք իրենց կարեկցանքն ու համակրանքն են հայտնել գաղութային լծի տակ գտնվող միլիոնավոր մասսաներին, չտեսնելով, սակայն, նրանց ազատագրման իրական ուղիները, իսկ ոմանք էլ քողարկվելով կապիտալիզմի «քաղաքակրթական» առաքելության կեղծ դիմակի տակ, փորձել են արդարացնել ու պաշտպանել իմպերիալիստական պետությունների գաղութատիրական քաղաքականությունը։ Դեռ ավելին. գտնվեցին մարդիկ, որոնք այն կարծիքին էին, որ Արևելքի հետամնաց երկրների գաղութացումը զարգացած երկրների կողմից միանգամայն օրինաչափ ու բնականոն երևույթ է։ Դա իր դասական արտահայտությունը գտավ Կիպլինգի «Արևելքն Արևելք է, իսկ Արևմուտքը՝ Արևմուտք» հանրահայտ ֆրազում։ Դրանով նա ոչ միայն ուզում էր արդարացնել Արևմուտքի տիրապետությունը Արևելքի վրա, այլ, որ ավելի կարևոր է, ձգտում էր այն ներկայացնել որպես մեկ անդամ ընդմիշտ տրված, հավերժական պրոցես։ Այդպիսի պարագաներում անհրաժեշտ էր ունենալ խորաթափանց միտք՝ խորքում տեղի ունեցող երևույթներն ըմբռնելու համար։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը առաջինն էին, որ այն միտքը հայտնեցին, թե Արևելքը շատ մեծ ասելիք ունի համայն մարդկությանը և նա վաղ թե ուշ իրենից կթոթափի գաղութային լուծը ու դուրս կգա ազատ զարգացման լայն ուղի։ Գաղութային հարցի վերաբերյալ նրանք արեցին հանճարեղ կռահումներ և առաջ քաշեցին սկզբունքային մի շարք դրույթներ, որոնց վրա հենվելով և ընդհանրացնելով իմպերիալիզմի դարաշրջանում ծավալված ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի պատմական փորձը, Վ. Ի. Լենինը մշակեց ազգային-գաղութային հարցի վերաբերյալ մի կուռ և ամբողջական ուսմունք։

*

Վ. Ի. Լենինը հեղափոխության մեծագույն ստրատեգ և հեղափոխական արվեստի անգերազանցելի վարպետ էր։ Նա զարմանալի խորաթափանցությամբ կարողանում էր դեռևս սաղմնային վիճակում տեսնել այն նոր երևույթները և ուժերը, որոնք կարող էին նպաստել մարդկության ազատագրմանը սոցիալական ու ազգային ճնշումից, հին աշխարհի կործանմանը և նրա փլատակների վրա նոր հասարակարգի կառուցմանը։ Այդ տեսակետից նա մեծ նշա-

նակություն էր տալիս Արևելքի երկրներում տեղի ունեցող պրոցեսներին։ Վ. Ի. Լենինի թողած գրական ժառանգությունից երևում է, թե ինչպես նա, ծանրաբեռնված լինելով տեսական ու պրակտիկ հսկայական աշխատանքներով, կարողացել է մեծ ուշադրություն դարձնել գաղութային ժողովուրդների պրոբլեմին։ Վ. Ի. Լենինը քաջատեղյակ էր Չինաստանում, Պարսկաստանում, արաբական երկրներում, Թուրքիայում, Ինդոնեզիայում և մյուս երկրներում տեղի ունեցող շարժումներին, այդ շարժումների ուժեղ և թույլ կողմերին, և տարբեր դասակարգերի ու կուսակցությունների դերին ու գործելակերպին։ Այդպիսի խորը և բազմակողմանի իմացությունը նրան հնարավորություն տվեց բացահայտել ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումների օրինաչափությունները և որոշել այն դերը, որ նրանք կարող են խաղալ համաշխարհային հեղափոխական պրոցեսում։ Այնպիսի բարդ ու խճողված հարցում, ինչպիսին ազգային և գաղութային հարցն էր, Վ. Ի. Լենինը մտցրեց լիակատար հստակություն ու պարզություն։

Ելնելով հարստահարվող ժողովուրդների ազատագրական շարժումների զարգացման և հասունության մակարդակից և նրանց առջև կանգնած խնդիրներից, Վ. Ի. Լենինը սահմանեց այդ շարժումների էտապները և ցույց տվեց գաղութային ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի դերը ընդհանուր հեղափոխական պրոցեսում։

Առաջին էտապը, որ ընդգրկում էր XIX դարի վերջից մինչև 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը, Վ. Ի. Լենինն անվանեց Ասիայի, կամ ավելի ճիշտ, Արևելքի զարթոնքի ժամանակաշրջան, որի շնորհիվ Ասիայում համաշխարհային մեծագույն փոթորիկների նոր աղբյուր բացվեց[1]։ Այդ զարթոնքը նա համեմատում էր մի հրդեհի հետ, որն Ասիայի մի պետությունից տարածվելով մյուսը, ազատագրական պայքարի մեջ ներգրավեց Արևելքի հարյուր միլիոնավոր մասսաների, որոնք դեռ երեկ քնած էին խոր քնով[2]։ Հսկայական նշանակություն տալով այդ զարթոնքին և նրան մեծ ապագա կանխատեսելով, Վ. Ի. Լենինը արդարացիորեն նշում էր, որ երբ այժմ խոսք է դնում ազատագրական շարժումների մասին, ապա մեր հայացքները «պետք է դարձնենք ոչ թե Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի վրա, այսինքն՝ այն երկրների վրա, որտեղ ազգային-ազատագրական շարժումն անցյալին է պատկանում... այլ Արևելքի, Ասիայի, Աֆրիկայի գաղութների վրա, որտեղ այդ շարժումը պատկանում է ներկային և ապագային։ Բավական է հիշատակել Հնդկաստանը, Չինաստանը, Պարսկաստանը, Եգիպտոսը»[3]։

Ընդգծելով Արևելքի ժողովուրդների զարթոնքի պատմական մեծ նշանակությունը, Վ. Ի. Լենինը դրա հետ միասին բացահայտեց այդ զարթոնքին նպաստող գործոնները, որոնք հիմնականում երկուսն էին։ Առաջինը, եվրոպական կապիտալի ներթափանցումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումն էր գաղութներում։ Դրա շնորհիվ Արևելքի երկրներում սկսեցին ձևավորվել տեղական ազգային բուրժուազիան և պրոլետարիատը, առաջացավ ազգային մտավորականություն։ Ժողովուրդները ազգային ինքնագիտակցության են գալիս և սկսվում է լայն շարժում գաղութների ազատագրման և ազգային ինքնուրույն պետություններ ստեղծելու համար։ «Անվիճարկելի է

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 739։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 223, հ. 18, էջ 199։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 517։

մնում այն,— գրել է Վ. Ի. Լենինը «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատությունում,— որ կապիտալիզմը, արթնացնելով Ասիան, այնտեղ ևս ամենուրեք ազգային շարժումներ է առաջ բերել, որ այդ շարժումների տենդենցն ազգային պետություններ ստեղծելն է Ասիայում»[4]։ Ազգային խմորումների հիման վրա բազմաթիվ երկրներում՝ Չինաստանում, Հնդկաստանում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Սիրիայում, Ինդոնեզիայում, Իրաքում, Լիբանանում և այլն, XIX դարի վերջին և XX դարի սկզբին ձևավորվում են զանազան ընդհատակյա կամ լեգալ ազգային միություններ, կոմիտեներ, լիգաներ և անգամ կուսակցություններ, որոնք դեկավարում են իրենց երկրների ժողովրդի պայքարը՝ գաղութային լծից ազատագրվելու համար։

Երկրորդ գործոնը՝ 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությունն էր, որի ազդեցությամբ մի շարք երկրներում (Չինաստան, Պարսկաստան, Թուրքիա) հեղափոխություններ են բռնկվում, իսկ մյուսներում (Հնդկաստան, Ինդոնեզիա, արաբական երկրներ և այլն) մեծ չափով բարձրանում է հակաիմպերիալիստական պայքարը։ «1905 թվականի ռուսական շարժումից հետո դեմոկրատական հեղափոխությունն ընդգրկել է ողջ Ասիան՝ Թուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը։ Աճում է խմորումն անգլիական Հնդկաստանում»[5]։

Արդ, առաջին էտապում, այսինքն զարթոնքի դարաշրջանում, ազգային-ազատագրական շարժումները ի՞նչ դեր էին խաղում համընդհանուր համաշխարհային հեղափոխական պրոցեսում։ Այս խնդրի պարզաբանմանը Վ. Ի. Լենինը մոտենում է տարբեր ասպեկտներից, ջանալով հարցը լուսաբանել ինչպես զարգացած երկրների պրոլետարիատի քաղաքական պայքարի, այնպես էլ Արևելքի ճնշված ժողովուրդների հակաիմպերիալիստական, հակազդութատիրական պայքարի շահերի տեսակետից։ Այդ առումով ազատագրական շարժումների դերն այս էտապում հիմնականում հանգում էր հետևյալին.

Առաջին, մինչև Արևելքի զարթոնքը, և զաղութային ժողովուրդների ներգրավվելը ազատագրական պայքարի մեջ, հեղափոխական շարժումները, հիմնականում, սահմանափակված էին Եվրոպայի առաջավոր երկրներով, որոնցում պրոլետարիատը քաղաքական պայքար էր մղում իր դասակարգային իդեալների իրագործման համար։ Այսպիսի պայմաններում, բնականաբար, խոսք չէր կարող լինել հեղափոխական շարժումների համաշխարհային բնույթի մասին, քանի որ աշխարհի բնակչության և երկրների ճնշող մեծամասնությունը դուրս էր գտնվում այդ պրոցեսից։ Միայն այժմ, Արևելքի զարթոնքից հետո, երբ Վ. Ի. Լենինի արտահայտությամբ Ասիայի և Աֆրիկայի հարյուր միլիոնավոր ազգաբնակչությունը ևս ընդգրկվեց հեղափոխական-ազատագրական շարժումների մեջ, հեղափոխական շարժումները դուրս եկան մի մայր ցամաքի շրջանակներից և ընդունեցին իսկապես համաշխարհային բնույթ։

Երկրորդ. Ասիայի և Աֆրիկայի երկրները պայքարելով գաղութային լուծը տապալելու և ազգային ինքնուրույն պետություններ ստեղծելու համար «խարխլում էին եվրոպական բուրժուազիայի տիրապետությունը»[6]։ Դրանով իսկ նախադրյալներ էին ստեղծվում իմպերիալիզմի գաղութային սիստեմի կործանման համար մի կողմից, և մյուս կողմից քաղաքական մեծ օգնություն էր ցույց տրվում Եվրոպական պրոլետարիատին։ Վերջինս, ի դեմս ճնշված ժողո-

---

4 Վ. Ի. Լենին, հ. 20, էջ 497։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 83։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 599։

վուրդների, ձեռք էր բերում մի նոր, այն էլ հզոր դաշնակից։ Այս միտքը շատ դեղեցիկ արտահայտել է Վ. Ի. Լենինը իր «Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածում։ «Եվրոպական դիտակից բանվորը,— կարդում ենք այնտեղ,— արդեն ասիական ընկերներ ունի, և այդ ընկերների թիվն կաճի ոչ թե օրերով, այլ ժամերով»[7]։ Ոտք դնելով ազատագրական պայքարի ասպարեզը, ճնշված երկրների ժողովուրդներն, իրենց հերթին, առաջավոր երկրների պրոլետարիատի մեջ գտնում են իրենց հետևողական ու դիտակից դաշնակցին։ Իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում նրանց շահերն համընկնում են և Արևելքի զարթոնքի դարաշրջանից սկսած գաղութներն իմպերիալիզմի ռեզերվից վեր են ածվում պրոլետարիատի, ավելի կոնկրետ, պրոլետարական հեղափոխությունների ռեզերվի։

Երրորդ, Արևելքում ծավալված ազատագրական շարժումներն իրենց ազդեցությունն ունեցան՝ դրական իմաստով, Եվրոպայի և ընդհանրապես զարգացած երկրների պրոլետարիատի պայքարի վրա։ Նրանք խթանեցին բանվոր դասակարգի պայքարը բուրժուազիայի դեմ, որոշակի թարմություն մտցրին այդ պայքարում և նոր լիցք հաղորդեցին հեղափոխական շարժմանը՝ Եվրոպայում։ Ուշադրություն դարձնելով ազատագրական շարժումների այդ կողմի վրա, Վ. Ի. Լենինը «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը» հոդվածում նշում է, որ, ոչ թե պետք է հուսահատվել, այլ կորով քաղել ութ հարյուր միլիոնանոց Ասիայի Եվրոպական իդեալների համար կռվի մեջ մտնելու փաստից[8]։ Վ. Ի. Լենինն ուղղակի մատնանշում է, որ «Ասիայից հետո սկսեց շարժվել, միայն ոչ-ասիականորեն, նաև Եվրոպան։ 1872—1904 թվականների «խաղաղ» ժամանակաշրջանն անդարձ կերպով հավիտենականության դիրկն անցավ»[9]։

Այսպիսով, Արևելքի զարթոնքի հետևանքով ազգային-ազատագրական շարժումները միավորվեցին կապիտալիստական երկրների բանվորների պայքարի հետ։ Դրանով իսկ պրոլետարիատի պայքարը, և գաղութային երկրների ազգային-ազատագրական շարժումները դարձան մարդկությանը սոցիալ-քաղաքական և ազգային ամեն մի ճնշումից ազատագրելու համաշխարհային ընդհանուր և միասնական հեղափոխական մեկ պրոցեսի բաղկացուցիչ մասերը։ «Սոցիալական հեղափոխությունը,— նշել է Վ. Ի. Լենինը։— չի կարող այլ կերպ տեղի ունենալ, քան իբրև մի դարաշրջան, որ միացնում է պրոլետարիատի քաղաքացիական կռիվը բուրժուազիայի դեմ առաջավոր երկրներում և մի ամբողջ շարք դեմոկրատական ու հեղափոխական, այդ թվում նաև ազգային-ազատագրական շարժումներ, չզարգացած, հետամնաց և ճնշված ազգերի մեջ»[10]։

Այս բոլորից պարզ հետևում է, որ գոյություն ունեին միանգամայն օբյեկտիվ պայմաններ՝ ստեղծելու առաջավոր երկրների պրոլետարիատի և Արևելքի ճնշված ժողովուրդների համաշխարհային հեղափոխական միասնական ճակատ և որ այդպիսի ճակատի ստեղծումը կենսականորեն անհրաժեշտ խնդիր էր։ Սակայն այդ ճակատը չէր կարող ստեղծվել տարերայնորեն։ Անհրաժեշտ էր նրա ստեղծման համար մղել ամենօրյա պայքար, մանավանդ որ

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 219։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 18, էջ 739։

9 Նույն տեղում, էջ 740։

10 Նույն տեղում, հ. 23, էջ 67։

այդ գործում բավական խոչընդոտներ կային։ Վ. Ի. Լենինը առաջնահերթ նշանակություն տալով համաշխարհային հեղափոխական ճակատի ստեղծմանը, գտնում էր, որ նման ճակատի կազմավորման կարևոր պայմաններից մեկը զանազան սխալ, կեղծ և հակամարքսիստական տեսակետներին հակահարված տալը և արևմտյան երկրների պրոլետարիատի ու Արևելքի ճնշված ժողովուրդների միջև փոխադարձ վստահություն ստեղծելն է։ Անհրաժեշտ էր հնարավորություն ստեղծել այդ երկու շարժումները միմյանց լավ ճանաչելու համար, որպեսզի ճնշված ժողովուրդները եվրոպական պրոլետարիատին չնույնացնեին բուրժուազիայի հետ, և, ընդհակառակը, որպեսզի եվրոպական պրոլետարիատը Արևելքը չդիտեր, որպես մի համասեռ մարմին, առանց սոցիալ-դասակարգային շերտավորումների։

Վ. Ի. Լենինն իր պայքարի սլաքը նախ և առաջ ուղղեց երկրորդ ինտերնացիոնալի կուսակցությունների իրենց «սոցիալիստ» հորջորջող առաջնորդների դեմ, որոնք փաստորեն հրաժարվել էին հեղափոխական մարքսիզմից և գլորվել օպորտունիզմի ճահիճը։ Նրանք ոչ միայն սկզբունքորեն հանդես չէին գալիս գաղութների գոյության դեմ, այլև առաջ էին քաշում «սոցիալիստական գաղութային քաղաքականության» տեսությունը։ Դա որոշակիորեն դրսևորվեց երկրորդ ինտերնացիոնալի 1907 թ. Շտուտգարտի կոնգրեսում։ Կոնգրեսի գաղութային հարցերի հանձնաժողովը, որը գլխավորում էր հոլանդացի հայտնի օպորտունիստ Վան-Կոլը, կոնգրեսին ներկայացրեց մի բանաձև, ուր ասված էր. «կոնգրեսը սկզբունքորեն և բոլոր ժամանակների համար չի դատապարտում ամեն մի գաղութային քաղաքականություն, որը կարող է սոցիալիստական ռեժիմի պայմաններում քաղաքակրթիչ ազդեցություն ունենալ»[11]։ Պաշտպանելով Վան-Կոլի այս հակամարքսիստական թեզը, գերմանական օպորտունիզմի առաջնորդներ Բերնշտայնը և Դավիդը արտահայտվեցին հօգուտ «սոցիալիստական գաղութային քաղաքականության»[12]։ Վ. Ի. Լենինը այս բոլորը որակեց որպես հրեշավոր և ուղղակի նահանջ դեպի բուրժուական այն քաղաքականությունը և բուրժուական աշխարհայացքը, որն արդարացնում է գաղութային պատերազմները և գաղանությունները[13]։ Դա ուղղակի դավաճանություն էր ճնշված մասսաների ազատագրման գործին և նշանակում էր հրաժարվել հեղափոխական մարքսիզմից։ Ֆ. Էնգելսը, կարծես, կանխատեսելով, որ պրոլետարական առաջնորդների շրջանում կգտնվեն «խելոքներ», որոնք «քաղաքակրթելու» անվան տակ կփորձեն առաջադրել «սոցիալիստական գաղութային քաղաքականության» թեզը, 1882 թ. սեպտեմբերի 12-ին Կ. Կաուցկուն ուղղված իր նամակում հետևյալ միտքն է արտահայտել. «Միայն մի բան անկասկած է. հաղթական պրոլետարիատը չի կարող ոչ մի օտար ժողովրդի վզին ոչ մի երջանկացում փաթաթել՝ զրանով չխարխլելով իր սեփական հաղթանակը»[14]։ Սակայն Եվրոպայի սոցիալ-օպորտունիստները, անտեսելով Ֆ. Էնգելսի այս միանգամայն ճիշտ տեսակետը, գրավեցին նրան տրամագծորեն հակառակ դիրք։ Միայն Լենինը և բոլշևիկյան կուսակցությունն էին, որ հետևողականորեն պայքարում էին մարքսիզմի անաղարտության համար և մարտնչում գաղութատիրության դրսևորման բոլոր ձևերի դեմ։ Այդ տեսակե-

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 96։

12 Նույն տեղում, էջ 82։

13 Նույն տեղում, էջ 96։

14 К. Маркс. Ф. Энгельс, Избранные письма, М., 1947, стр. 357.

ից ուշադրավ է նաև Վ. Ի. Լենինի պայքարը դաղութների հարցում եվրոպական սոցիալիստների մոտ տարածում գտած օպորտունիզմի մեկ այլ տարատեսակի դեմ։ Որոշ գործիչներ, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հանդես գալով ազգերի ազատագրման պահանջով, նկատի ունեին միայն որոշակի ազգերի և իրենց այդ պահանջը անվերապահորեն չէին տարածում աշխարհի բոլոր ճնշված ժողովուրդների վրա։ Վ. Ի. Լենինը բոլոր նրանց, ովքեր այդ տեսակետին էին, համարում էր ոչ թե սոցիալիստներ, այլ նացիոնալիստներ ու իմպերիալիստներ, որոնք պաշտպանում են մի խումբ ազգերի արտոնյալ վիճակը։

«Եթե ազգերի ազատության պահանջը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կեղծ ֆրազ չէ, որ քողարկում է մի քանի առանձին երկրների իմպերիալիզմն ու նացիոնալիզմը, ապա այն պետք է տարածվի բոլոր ժողովուրդների և բոլոր գաղութների վրա»[15]։

Իսկ որոշ գործիչներ հանդես էին գալիս գաղութներին ազատություն և ինքնորոշում տալու դեմ, պատճառաբանելով, որ գաղութներում պրոլետարիատ չկա։ Այս սխալ տեսակետն էր պաշտպանում, օրինակ, Յու. Պյատակովը։ Վ. Ի. Լենինը քարը-քարի վրա չթողեց այս հակամարքսիստական և սխալ տեսակետից։ Նա ամենից առաջ ցույց տվեց, որ Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներում բանվոր դասակարգ գոյություն ունի։ Նշելով, որ գաղութներում ապրում է մոտ մեկ միլիարդ մարդ, Վ. Ի. Լենինը ընդգծում է, որ դրանից «700 միլիոնից ավելին (Չինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Եգիպտոսը) պատկանում է այն երկրներին, որտեղ բանվորներ կան»[16]։ Սա հարցի մի կողմն էր միայն։ Իսկ ի՞նչ անել այն երկրների հետ, որտեղ իրոք բանվորներ չկային։ Մի՞թե մարքսիստի համար թույլատրելի էր չճանաչել այդ երկրների ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ ազատագրվելը գաղութային լծից, ինչպես վարվում էր Յու. Պյատակովը։ Վ. Ի. Լենինը վճռականորեն դատապարտեց նաև մարքսիզմին միանգամայն խորթ այդ տեսությունը։ «Նույնիսկ այն գաղութային երկրների համար,— գրում էր նա,— որտեղ բանվորներ չկան, որտեղ կան միայն ստրկատերեր ու ստրուկներ և այլն, «ինքնորոշում» առաջադրելը ոչ միայն անհեթեթություն չէ, այլ պարտադիր է յուրաքանչյուր մարքսիստի համար»[17]։

Եթե վերևում նշված սխալ տեսակետները հաղթանակեին և կյանքում իրենց համար ուղի հարթեին, ապա անուղղելի հարված կհասցվեր Արևմուտքի պրոլետարիատի և Արևելքի ճնշված ժողովուրդների դաշինքին և անհնար կդառնար նրանց հեղափոխական ճակատի ստեղծումը։ Իսկ դրա հետևանքը այն կլիներ, որ համաշխարհային հեղափոխական շարժման այդ երկու հիմնական ուժերից յուրաքանչյուրի համար շատ դժվար կլիներ խաղալ իր դերը և իրագործել իր պատմական առաքելությունը։ Եվ իրոք, եթե պրոլետարիատի «սոցիալիստ» առաջնորդները ոչ միայն հանդես չէին գալիս հօգուտ բոլոր գաղութների ազատագրման, այլև առաջ էին քաշում նոր, թեկուզ և սոցիալիստական գաղութային քաղաքականություն, ապա ճնշված ժողովուրդները ինչո՞ւ պետք է միավորվեին և պաշտպանեին պրոլետարիատի հեղափոխական պայքարը իր բուրժուազիայի դեմ։ Արևելքի ճնշված ժողովուրդների համար վերջին

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 368—369։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 73։
17 Նույն տեղում, էջ 73—74։

հաշվով մեկ էր, թե նրանք ինչպիսի գաղութային լծի տակ կգտնվեին, կապիտալիստական՞ թե «սոցիալիստական»։

Ահա թե ինչու, Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն և ժամանակ էր նվիրում այս հարցերի պարզաբանմանը, անողոք պայքար հայտարարելով եվրոպական օպորտունիզմի և հեղափոխական մարքսիզմից կատարվող ամեն մի նահանջի դեմ։ Ի հակադրություն երկրորդ ինտերնացիոնալի սոցիալ-շովինիստների, նա առաջ քաշեց ազգերի ինքնորոշման լոզունգը, որպես տվյալ պայմաններում միակ ճիշտ մարքսիստական քաղաքականություն։ Ըստ այդ ուսմունքի, բոլոր ազգերը՝ մեծ թե փոքր, անկախ այն բանից, թե աշխարհի որ մասում են բնակվում, ունեն ազատ ինքնորոշման իրավունք, ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն ազգային պետություն կազմելը։ Ինքնորոշման իրավունքի պաշտպանումը Վ. Ի. Լենինը տիրապետող ազգի ամեն մի սոցիալիստի ուղղակի պարտականությունն էր համարում։ «Մեր դարաշրջանում,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ազգերի ինքնորոշման հարցի մեխը հենց ճնշող ազգերի սոցիալիստների վարքագիծն է։ Ճնշող ազգի (Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և ուրիշների) այն սոցիալիստը, որը չի ընդունում և չի պաշտպանում ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքը (այսինքն ազատ կերպով անջատվելը) իրականում սոցիալիստ չէ, այլ շովինիստ է»[18]։

Պայքարելով հակամարքսիստական դանդաղ տեսակների դեմ և պաշտպանելով գաղութային երկրների ազգային շահերը, գրանով իսկ Վ. Ի. Լենինը կոփում էր Արևելքի և Արևմուտքի հեղափոխական ուժերի դաշինքը, և առավելագույն նպաստավոր պայմաններ ստեղծում ազգային-ազատագրական շարժումների համար՝ կատարելու այն դերը, որ պատմության կողմից դրված էր նրանց վրա։

*

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից և աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծումից հետո, Արևելքի երկրների ազգային-ազատագրական շարժումների մեջ սկսվեց նոր էտապ։ Եթե առաջին էտապը Վ. Ի. Լենինը բնութագրեց որպես զարթոնքի դարաշրջան, ապա այս նոր՝ երկրորդ էտապը նա համարեց ամբողջ աշխարհի բախտի լուծմանը Արևելքի ժողովուրդների մասնակցման դարաշրջան։ Հարկ է նշել, որ այդ երկու էտապները միմյանցից բաժանված չէն չինական պարիսպով։ Նրանց միջև կա օրգանական կապ և երկրորդ էտապն, ըստ էության, նախապատրաստվեց առաջին էտապով։

1919 թ. նոյեմբերի 22-ին հանդես գալով Արևելքի կոմունիստական կազմակերպությունների համառուսական երկրորդ համագումարում, Վ. Ի. Լենինը հայտարարեց. «Արևելքի արթնացման շրջանից հետո արդի հեղափոխության մեջ մոտենում է այն շրջանը, երբ Արևելքի բոլոր ժողովուրդները կմասնակցեն ամբողջ աշխարհի բախտի լուծմանը, որ միայն հարստացման օբյեկտ չլինեն»[19]։ Այս միտքը Վ. Ի. Լենինը բազմիցս կրկնում է իր ելույթներում և հոդվածներում, որը վկայում է այն մասին, թե նա ինչպիսի մեծ նշանակություն

---

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 370։

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 186—187։

էր տալիս ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նոր էտապին և դրա հետ կապված մի շարք տեսական ու գործնական հարցերի լուսաբանմանը։

Երկրորդ էտապում փոխվեց այն գերը, որ կոչված էին խաղալու Արևելքի ազատագրական շարժումները համաշխարհային հեղափոխական պրոցեսում։ Նրանց առջև այժմ կանգնեցին նոր խնդիրներ։ Այս էտապում գլխավոր խնդիրը համարվում էր իմպերիալիզմի գաղութային սիստեմի կործանումը։ Ինչպես նշել ենք, Արևելքում ծավալված շարժումները առաջին էտապում լոկ խարխլում էին եվրոպական բուրժուազիայի դիրքերը գաղութներում, սակայն գաղութային սիստեմի կործանման հարցը, որպես պրակտիկ առաջնահերթ խնդիր, չէր դրված։ Դա պետք է բացատրել ոչ թե նրանով, որ Արևելքի ժողովուրդները այդ բանը չէին ցանկանում, այլ նրանով, որ չէին կարող այդ հարցը լուծել։ Նրանց շարժումները դեռևս թույլ էին — չպետք է մոռանալ, որ նրանք նոր էին արթնացել դարավոր քնից։ Բացի այդ, սա շատ կարևոր հանգամանք է, իմպերիալիզմն իրենից ներկայացնում էր մի համապարփակ համաշխարհային սիստեմ, որը դեռևս շատ ուժեղ էր։ Պատկերը բոլորովին փոխվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից և առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո։ Սովետական պետության կազմավորումով իմպերիալիզմի շղթան ճեղքվեց և այն դադարեց միասնական սիստեմ լինելուց։ Նրա կողքին հիմք դրվեց համաշխարհային սոցիալիստական սիստեմին։ Սա մեծ հարված էր իմպերիալիզմին։ Վերջինս զգալի չափով տկարացավ։ Այդ ժամանակվանից սկսվում է իմպերիալիզմի և նրա գաղութային սիստեմի հարատևող ճգնաժամը։ Իսկ սովետական պետության ստեղծումով Արևելքի ժողովուրդները ձեռք բերեցին հավատարիմ դաշնակցի, որի ռազմա-քաղաքական և տնտեսական հզորությունը ծառայում էր նրանց ազատագրման գործին։ Հատկապես այս վերջին հանգամանքի վրա մեծ ուշադրություն էր դարձնում Վ. Ի. Լենինը։ Նա բազմիցս ընդգծել է, որ Արևելքի ազատագրական շարժումները, եթե նրանք ուզում են կործանել գաղութային սիստեմը և կատարել իրենց պատմական դերը, ապա նրանք պետք է սերտ դաշինքի մեջ գտնվեն սովետական պետության, ինչպես նաև կապիտալիստական պետությունների պրոլետարիատի հետ։ «Արևելքի ժողովուրդների հեղափոխական շարժումը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կարող է այժմ հաջող զարգացում ստանալ, կարող է այն լուծում ստանալ ոչ այլ կերպ, քան անմիջականորեն կապվելով մեր սովետական հանրապետության հեղափոխական պայքարի հետ՝ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի»[20]։

Երկրորդ, եթե սովետական պետության ստեղծումը և սոցիալիզմի սիստեմի առաջացումը նպաստեցին Արևելքի ժողովուրդների ազատագրական շարժման նոր փուլի ձևավորմանը, որի հիմնական նպատակը գաղութային սիստեմի կործանումն էր, ապա պայքարը հանուն այդ խնդրի, իր հերթին, մեծ օգնություն էր թե՛ սովետական հանրապետությանը և թե՛ համաշխարհային սոցիալիստական շարժմանը։ Գաղութային ժողովուրդների ակտիվ պայքարը իմպերիալիզմի դեմ ամրացնում էր սովետական պետության դիրքերը, որն այն ժամանակ միակ սոցիալիստական երկիրն էր աշխարհում և շրջապատված էր կապիտալիստական երկրներով։ Իմպերիալիստական պետությունները զբաղված լինելով ազգային-ազատագրական շարժումների ճնշմամբ, այլևս այնքան

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 174։

ուժ և հնարավորություն չունեին իրենց ամբողջովին նվիրելու սոցիալիզմի դեմ պայքարելու գործին։ Ահա թե ինչու վստահությամբ կարելի է ասել, որ Արևելքի երկրների ազատագրվելը գաղութային լծից և ինքնուրույն ազգային պետությունների կազմվելը մեծապես նպաստում էր սոցիալիզմի հաղթանակին համաշխարհային մասշտաբով։ Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ վերջնականապես իմպերիալիզմին կարող է հաղթել աշխարհի բոլոր երկրների պրոլետարիատը և ռուսները սկսում են այն գործը, որը կամրապնդի անգլիական, ֆրանսիական կամ գերմանական պրոլետարիատը։ «Բայց մենք տեսնում ենք,— շարունակում է նա,— որ նրանք առանց բոլոր ճնշված գաղութային ժողովուրդների աշխատավոր մասսաների և առաջին հերթին Արևելքի ժողովուրդների աշխատավոր մասսաների օգնության չեն հաղթի»[21]։ Սա վկայում է այն մասին, թե ինչպիսի մեծ դեր էին խաղալու, և, իրոք խաղացին, Արևելքի ժողովուրդների ազատագրական շարժումները համաշխարհային պատմության մեջ։

Երրորդ, այս էտապի բնորոշ գծերից մեկը Արևելքի երկրներում կոմունիստական կազմակերպությունների և ասյա կոմունիստական կուսակցությունների առաջացումն էր։ Գիտական կոմունիզմի գաղափարները տարածվում են Ասիայի և Աֆրիկայի ամենահեռավոր անկյունները և այդ վայրերում ստեղծվում են ժամանակակից հեղափոխական շարժման ամենաբարձրագույն աստիճանը ներկայացնող ուժեր։ Վ. Ի. Լենինը Արևելքի երկրներում կոմունիստական կազմակերպությունների առաջացումը դիտելով իբրև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարների նոր տրիումֆ, միաժամանակ այդ կազմակերպությունների ղեկավարներին խորհուրդ էր տալիս ինչպես գործել Արևելքի յուրահատուկ և Եվրոպայից ու Ամերիկայից տարբերվող պայմաններում։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք հենվելով կոմունիստական ընդհանուր տեսության վրա և հարմարվելով յուրահատուկ պայմաններին, պետք է «կարողանան այդ թեորիան և տակտիկան կիրառել այն պայմաններում, երբ գլխավոր մասսան հանդիսանում է գյուղացիությունը»[22]։ Լենինյան այս պահանջը հրատապ էր դառնում այն պատճառով, որ պայքարի տրամաբանությունն, անխուսափելիորեն, Արևելքի երկրներում ժողովրդական մասսաներին նույնպես պետք է հանգեցներ, և իրոք հանգեցրեց, պայքարի՝ սոցիալական արդարության համար։ Այլ կերպ ասած, ազգային-ազատագրական շարժումները զարգացման որոշակի փուլում իրենց մեջ պետք է ազգային անկախության համար պայքարի հետ միասին ներառնեին նաև պայքարը հանուն սոցիալ-քաղաքական վերափոխումների։ Այդ մասին էր խոսում Վ. Ի. Լենինը 1921 թվականին, Կոմինտերնի երրորդ կոնգրեսում արտասանած իր ճառում. «կատարելապես պարզ է, որ համաշխարհային հեղափոխության ապագա վճռական ճակատամարտերում երկրագնդի բնակչության մեծամասնության շարժումը, որ սկզբում ուղղված էր ազգային ազատագրության նպատակին, կշրջվի կապիտալիզմի և իմպերիալիզմի դեմ և, գուցե շատ ավելի մեծ հեղափոխական դեր խաղա, քան մենք սպասում ենք»[23]։ Իսկ այդ ճակատամարտում մեծ անելիքներ ունեին Արևելքի կոմունիստական կուսակցությունները։ Նրանց ձևավորումը երաշխիք էր այն բանի, որ կապիտալիզմի դեմ մղվող պայքարում Արևելքի աշխատավորական մասսաները չէին գտնվի

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 189։

22 Նույն տեղում, էջ 188։

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 622։

անկազմակերպ վիճակում և կունենային իրենց ուղղություն տվող և ղեկավարող ուժը։ Եվ, իրոք, կոմունիստական կուսակցությունները Արևելքի դժվարին ու բարդ պայմաններում ղեկավարում են աշխատավորական մասսաների պայքարը, հանուն սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումների։

Եվ վերջապես, չորրորդ. ազգային-ազատագրական շարժումները երկրորդ էտապում առաջադրեցին մի խնդիր, որ մինչ այդ թե՛ տեսության մեջ և թե՛ պրակտիկայում չէր դրվել։ Դա Արևելքի երկրների զարգացման ուղու հարցն էր։ Հայտնի է, որ այդ երկրների ճնշող մեծամասնությունը տնտեսապես հետամնաց երկրներ են, որտեղ կապիտալիստական հարաբերությունները կամ բոլորովին գոյություն չունեն կամ նոր են սկսել զարգանալ։ Այսպիսի պայմաններում հարց է ծագում, արդյո՞ք այդ երկրները բոլոր պայմաններում պարտադիր կերպով պետք է անցնեն զարգացման կապիտալիստական ստադիան, թե՝ զարգացման ինչ-որ փուլում, բարենպաստ պայմանների առկայության դեպքում, հնարավոր է շրջանցել կապիտալիզմը և ուղղակի անցնել սոցիալիզմին։ Այս հարցը շատ է հետաքրքրել Վ. Ի. Լենինին։ Խնդրի բարդությունը կայանում էր նրանում, որ ինքը պրակտիկան սկզբում դեռևս շատ քիչ բան էր հուշում և այդ իմաստով Վ. Ի. Լենինի ձեռքի տակ շատ քիչ նյութ կար տեսական ընդհանրացումներ կատարելու համար։ Նա միայն կարող էր օգտվել սովետական Միջին Ասիայի շրջանների և Մոնղոլիայի փորձից, որոնք այդ ուղղությամբ միայն առաջին քայլերն էին կատարում։ Այնուամենայնիվ, Վ. Ի. Լենինը, հենվելով այդ աղքատիկ փորձի վրա, կարողացավ ոչ միայն հանճարեղ կռահումներ կատարել տվյալ հարցի վերաբերյալ, այլ տալ մի հիմնավորված տեսություն։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ պարտադիր չէ, որ բոլոր երկրներն անխուսափելիորեն ապրեն կապիտալիստական զարգացում։ Որոշ բարենպաստ պայմանների դեպքում, Արևելքի երկրները կարող են իրենց զարգացման տրվյալ վիճակից անցնել սոցիալիզմին ու կոմունիզմին, շրջանցելով կապիտալիստական ստադիան։ Իսկ դրա համար, ըստ Վ. Ի. Լենինի, երկու պայման էր անհրաժեշտ։ Նախ, հաղթական հեղափոխական պրոլետարիատը այդ երկրներում պետք է սիստեմատիկ պրոպագանդա մղի, տարածելով ու աշխատավորական մասսաներին ծանոթացնելով կոմունիզմի գաղափարներին։ Այդ գործում մեծ դեր ունեին կատարելու Արևելքի երկրների կոմունիստական կազմակերպությունները։ Երկրորդ, Արևելքի այդ երկրներին պետք է օգնության հասնեն սոցիալիստական կառավարությունները՝ իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով[24]։ Միայն այս պայմանների դեպքում, այսինքն՝ «առաջավոր երկրների պրոլետարիատի օգնությամբ հետամնաց երկրները կարող են անցնել սովետական կարգին և զարգացման որոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, խուսափելով զարգացման կապիտալիստական ստադիայից»[25]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինը, մեր դարաշրջանի մարքսիզմի մեծագույն տեսաբանը և հեղափոխական կազմակերպիչը, ընդհանրացնելով Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների փորձը, տվեց այդ շարժման էտապները, որոշեց յուրաքանչյուր էտապում Արևելքի ժողովուրդների պայքարի տեղն ու դերը համաշխարհային հեղափոխական պրոցեսում և առաջ քաշեց ու հիմնավորեց սոցիալիստական երկրների, կապիտալիստական եր-

---

24 Վ. Ի. Լենին, հ. 31, էջ 294—295։

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 295։

կրների պրոլետարիատի ու Արևելքի հետամնաց երկրների աշխատավորական մասսաների միասնական հեղափոխական ճակատ ստեղծելու գաղափարը։ Նա միաժամանակ ցույց տվեց այն նորը, որ գաղութային երկրների ազատագրական պայքարը մտցրեց համաշխարհային հեղափոխական պրակտիկայում, դրա հիման վրա արեց մի շարք տեսական ընդհանրացումներ, որի շնորհիվ սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունը դարձավ ավելի կուռ ու ամբողջական։

Պատմության հետագա ընթացքը լրիվ կերպով հաստատեց Վ. Ի. Լենինի տեսակետները Արևելքի ժողովուրդների դերի մասին։ Պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նրանք, հենվելով Սովետական Միության, սոցիալիստական մյուս երկրների և համաշխարհային բանվորական շարժման աջակցության վրա, կործանեցին իմպերիալիզմի գաղութային սիստեմը և ստեղծեցին իրենց ազգային ինքնուրույն պետությունները։ Ասիայի մի շարք երկրներում ծնվեցին սոցիալիստական պետություններ։ Սոցիալիզմն իրենց ազգային բարձրագույն իդեալն են հայտարարել Ասիայի և Աֆրիկայի բազմաթիվ երկրներ։ Ազգային-ազատագրական շարժումներն այժմ թևակոխել են մի էտապ, երբ առաջին պլանի վրա են քաշվել սոցիալ-տնտեսական վերափոխումների և զարգացման ուղու ընտրման հարցերը։ Այդ միանգամայն բարդ պրոբլեմների լուծման համար ազատագրված երկրների առաջադեմ գործիչներին և կազմակերպություններին անգնահատելի օգնություն է ցույց տալիս Արևելքի ժողովուրդների մեծ բարեկամի՝ Վ. Ի. Լենինի տեսական ժառանգությունը։

В. И. ЛЕНИН О МЕСТЕ И РОЛИ ОСВОБОДИТЕЛЬНЫХ ДВИЖЕНИЙ УГНЕТЕННЫХ НАРОДОВ ВОСТОКА В МИРОВОЙ РЕВОЛЮЦИОННОЙ БОРЬБЕ

Н. О. ОГАНЕСЯН

Резюме

Выявив закономерности национально-освободительных движений и обобщив опыт антиимпериалистической борьбы народов Востока, В. И. Ленин пришел к выводу, что эта борьба в своем развитии прошла два этапа.

Первый этап, охватывающий период с конца XIX века до Октябрьской революции, В. И. Ленин охарактеризовал как период пробуждения народов Востока. На этом этапе революционное движение, в результате включения многомиллионных масс Азии и Африки в общую освободительную борьбу, вышло за пределы одного материка и приобрело действительно всемирный характер. Освободительное движение в колониях стимулировало антикапиталистическую борьбу европейского пролетариата и расшатывало колониальную систему империализма.

Второй этап, начавшийся после Октябрьской революции, В. И. Ленин охарактеризовал как период участия народов Востока в решении

судеб человечества всего мира. Историческая роль национально-освободительных движений на втором этапе заключалась, в первую очередь, в ликвидации колониальной системы империализма. Кроме того, антиимпериалистическая борьба народов Востока объективно укрепляла позиции Советского Союза, а затем и других социалистических стран и обогащала марксистско-ленинскую теорию о возможности перехода отсталых народов к социализму, минуя капиталистическую стадию развития.